ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N ՄՊ/225-2020 **ք.Արտաշատ**

„16„ 10 **2020թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-ի N 19 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի ա) ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով <<ՀՀ Արարատի մարզի Ոսկետափի Ս. Հովհաննիսյանի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական և ծնողական խորհուրդների նախագահների գրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2016 թվականի մարտի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Պետական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման խորհուրդների կազմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 30.06.2010թ. N68, 26.11.2010թ. N 123, 26.01.2011թ. N 05, 28.10. 2011թ. N 74, 26.05.2014թ. N 55 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 19 որոշման հավելվածի 65-րդ տողում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Վերահաստատել դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Նելլի Ղևոնդյանի և ծնողական խորհուրդի կողմից առաջադրված Սյուզի Ազատյանի թեկնածությունները:
2. <<Հովհաննիսյան Անուշ>> բառերը փոխարինել <<Մարգարյան Նազելի>> բառերով:

Recoverable Signature

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: SARGSYAN GARIK 2811870695 Գ. ՍԱՐԳՍՅԱՆ